ԳԼՈՒԽ ՄԶԸ.

Ամենայն պաշտօնատար զօրք իւրօք 'ի խըմբից կարմիր սպարապետի 'ի վերայ իւրեանց նշանս տանիցէ այսինքն.

1) *Սպարապետն ուրար կապուտ պարանոց 'ի թիկնամէջն։*
2) *Գնդապետն փունջ կապուտ 'ի վերայ գլխակի։*
3) *Ասպետն փունջ կապուտ 'ի վերայ երկու յուսոց իւրոց։*
4) *Հազարապետն համար պետութեան իւրոյ նումրով 'ի վերայ յուսոյ կապուտ։*
5) *Հարիւրապետն երիս չուան կապուտ գոյնաւոր մի կանգունաչափ ապրշմէ յուսին կախ։*
6) *Տասնապետն մի չուան 'ի մի կանգունաչափ կապուտ յուսէն կախ նիզէն 'ի ձեռն իւր, սուր ընդ մէջ։*
7) *Ամենայն զինուոր 'ի ներքոյ խմբին կարմիր սպարապետին տանիցէ նումբրն հազարապետին իւրոյ կապուտ թելով քաշած 'ի վերայ կապի քամակին իւրոյ որ ծանիցէ որում հազարապետի է այս։*

ԳԼՈՒԽ ՄԶԹ.

Սպարապետն կապուտ ըստ վերոյ գրեցելոյն